ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«_____» _____ 2026թ. **N___-Ա**

ՈՐՈՇՈՒՄ

Գ. ՀՈՎՍԵՓՅԱՆ ՓՈՂՈՑԻՆ ՀԱՐՈՂ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով հողային օրենսգրքի 3–րդ հոդվածի 1-ին կետով, «Քաղաքաշինության մասին» օրենքի 14^3-րդ հոդվածի 9-րդ և 12-րդ մասերով, «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 20.1 կետի պահանջներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի հ.1920-Ն որոշումը.

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Երևան քաղաքի Գ. Հովսեփյան փողոցին հարող տարածքում գտնվող, պետական սեփականություն հանդիսացող հողամասի (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման հ.18082025-01-0062 վկայական, ծածկագիր՝ 01-009-0090-0239) 1.773 հա մակերեսով հողամասի նպատակային նշանակությունը «բնակավայրերի նշանակության» հողերի կատեգորիայից փոխադրել «անտառային» հողերի կատեգորիա:

2. Երևանի քաղաքապետին՝ սույն որոշման 1-ին կետով հողամասի նպատակային նշանակության կատարված փոփոխության մասին 10-օրյա ժամկետում օրենսդրությամբ սահմանված կարգով տեղեկացնել Կադաստրի կոմիտե և Քաղաքաշինության կոմիտե՝ կցելով սույն որոշման սահմանված կարգով հաստատված պատճենը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«Գ. ՀՈՎՍԵՓՅԱՆ ՓՈՂՈՑԻՆ ՀԱՐՈՂ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Նախագծով նախատեսվում է Երևան քաղաքի Գ. Հովսեփյան փողոցին հարող տարածքում գտնվող Հայաստանի Հանրապետութանը սեփականության իրավունքով պատկանող 1.773 հա մակերեսով (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման հ.18082025-01-0062 վկայական, ծածկագիր՝ 01-009-0090-0239) հողամասի նպատակային նշանակությունը բնակավայրերի հողերի կատեգորիայից փոխադրել անտառային հողերի կատեգորիա:

Հայաստանի Հանրապետության կառավարության 07.08.2025թ. «Անշարժ գույք ամրացնելու և անհատույց օգտագործման իրավունքով ամրացնելու մասին» հ.1098-Ա որոշմամբ նախատեսվում է Հայաստանի Հանրապետության սեփականությունը հանդիսացող՝ Գ. Հովսեփյան փողոցին հարող տարածքում գտնվող 1.773 հա մակերեսով ամրացնել ՀՀ շրջակա միջավայրի նախարարությանը: Նույն որոշմամբ նախատեսվում է քննարկվող անշարժ գույքը անորոշ ժամկետով անհատույց օգտագործման իրավունքով ամրացնել «Հայանտառ» պետական ոչ առևտրային կազմակերպությանը՝ կանոնադրական գործառույթներին համապատասխան գործունեություն իրականացնելու համար, ինչի պարագայում ներկայումս անհրաժեշտություն է առաջացել հողամասի նպատակային նշանակությունը բնակավայրերի հողերի կատեգորիայից փոխադրել անտառային հողերի կատեգորիա:

Երևան քաղաքի ավագանու որոշման նախագիծը հավանության է արժանացել ՀՀ վարչապետի 2009 թվականի դեկտեմբերի 22-ի հ.1064-Ա որոշմամբ ստեղծված ՀՀ համայնքների (բնակավայրերի) քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի կողմից:

Համաձայն «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի 14^3-րդ հոդվածի 5-րդ մասի՝ համայնքի քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերը համայնքի ղեկավարի ներկայացմամբ քննարկվում են միջգերատեսչական հանձնաժողովի նիստում և հաստատվում են համայնքի ավագանու կողմից՝ միջգերատեսչական հանձնաժողովի դրական եզրակացության հիման վրա:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ